

Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությունն ընդունվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից՝ 2009 թ. սեպտեմբերի 9-ին: Այն ստորագրման համար բացվել է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների տեղական ինքնակառավարման ոլորտի պատասխանատու նախարարների 16-րդ նստաշրջանում (Ուտրեխտ, 2009թ. նոյեմբեր 16-17): Լրացուցիչ արձանագրության ստորագրման բացման օրը (2009թ. նոյեմբերի 16) այն ստորագրել են 12 երկրներ՝ Բելգիան, Էստոնիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Հունգարիան, Իսլանդիան, Լիտվան, Մոնտենեգրոն, Նիդեռլանդիան, Նորվեգիան, Սլովենիան և Մեծ Բրիտանիան:

Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությունը Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին

Ուտրեխտ 2009

Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի սույն լրացուցիչ արձանագրությունը (այսուհետ՝ Խարտիա, ETS No 122) ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները՝

- համարելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակը նրա անդամների միջև ավելի կայուն միասնության հաստատումն է՝ հանուն ընդհանրական սեփականություն հանդիսացող գաղափարների և սկզբունքների պահպանման ու իրականացման,
- համարելով, որ հանրային կառավարմանը մասնակցելու իրավունքը ժողովրդավարական այն սկզբունքներից է, որը կիսում են Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները,
- համարելով, որ անդամ պետությունների զարգացումը կարևորում է այս սկզբունքի բացառիկությունը տեղական ինքնակառավարման համար՝ նկատի ունենալով 2008-ի նոյեմբերի 27-ին Նախարարների կոմիտեի ընդունած «Պաշտոնական փաստաթղթերի

հասանելիության մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան,

- նկատի ունենալով Եվրոպայի Խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների 3-րդ գագաթնաժողովում (Վարշավա 16-17 մայիսի 2005թ.) ընդունված հռչակագիրը և գործողությունների ծրագիրը, համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1. Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքը

1. Մասնակից պետությունները, իրենց իրավասությունների շրջանակներում, պետք է ապահովեն տեղական իշխանության գործերին յուրաքանչյուրի մասնակցության իրավունքը:

2. «Տեղական իշխանության գործերին մասնակցության իրավունք» նշանակում է տեղական իշխանության լիազորությունների և պարտավորությունների իրականացման ձևերը փնտրելու, որոշելու կամ դրանց վրա ազդելու իրավունքը:

3. Այդ իրավունքի իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը պետք է սահմանվեն օրենքով: Օրենքը, բացառելով ցանկացած անձի կամ խմբի նկատմամբ խտրականությունը, կարող է տարբեր իրավիճակների կամ մարդկանց խմբերի համար սահմանել հատուկ չափանիշներ: Համաձայն Սահմանադրության և/կամ Կողմի միջազգային պարտավորությունների՝ օրենքը կարող է, մասնավորապես, սահմանել չափանիշներ՝ սահմանափակ միայն ընտրողների համար:

4.1 Յուրաքանչյուր Կողմ պետք է օրենքով ճանաչի իր քաղաքացիների՝ ըստ իրենց բնակության վայրի, տեղական իշխանության՝ խորհրդի կամ ժողովի, անդամների ընտրությանը որպես ընտրող կամ թեկնածու մասնակցելու իրավունքը:

4.2 Օրենքը պետք է ճանաչի նաև այլ անձանց մասնակցության իրավունքը, եթե Կողմը դա սահմանել է իր Սահմանադրությամբ կամ եթե դա բխում է Կողմի միջազգային իրավական պարտավորություններից:

5.1 Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի ցանկացած նորմ, պայման և սահմանափակում պետք է սահմանվի օրենքով և չպետք է հակասի Կողմի միջազգային իրավական պարտավորություններին:

5.2 Օրենքը պետք է սահմանի անհրաժեշտ նորմեր, պայմաններ և սահմանափակումներ, որոնք ապահովում են մասնակցության իրավունքի իրականացումը՝ չվտանգելով տեղական իշխանությունների լիազորությունների իրականացման էթիկան և թափանցիկությունը:

5.3 Այլ նորմեր, պայմաններ և սահմանափակումներ են անհրաժեշտ արդյունավետ քաղաքական ժողովրդավարության իրականացնելու, ժողովրդավարական հասարակության մեջ հանրային անվտանգության պահպանելու կամ Կողմի միջազգային իրավական պարտավորությունների պահանջներին համապատասխանեցնելու համար:

Հոդված 2. Մասնակցության իրավունքի իրականացման միջոցները

1. Կողմերը պետք է ընդունեն այն բոլոր չափանիշները, որոնք անհրաժեշտ են տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի կիրարկման համար:

2. Մասնակցության իրավունքի իրականացման չափանիշները ներառում են.

1) լիազորել տեղական իշխանություններին՝ հնարավոր դարձնել, խրախուսել և աջակցել սույն արձանագրության մեջ նշված մասնակցության իրավունքի իրականացումը,

2) ապահովել մշակումը՝

ա) մարդկանց ներգրավման ընթացակարգերի՝ ներառյալ խորհրդատվական գործընթացներ, հանրաքվեներ և միջնորդագրեր, և մարդկանց տեղական իշխանության մոտ մակարդակում ներգրավման չափանիշների, երբ համայնքի բնակչության թվաքանակը մեծ է և/կամ այն ընդգրկում է լայն աշխարհագրական տարածք,

բ) հասանելիության ընթացակարգերի, Կողմի սահմանադրական պահանջներին և միջազգային պարտավորություններին համապատասխան, ապահովելու տեղական իշխանությունների պաշտոնական փաստաթղթերի ձեռք բերումը,

գ) միջոցների՝ բավարարելու մասնակցության որոշակի դժվարությունների հանդիպող խմբերի կարիքները

դ) մեխանիզմների և ընթացակարգերի՝ քննարկելու և արձագանքելու տեղական իշխանությունների և տեղական հանրային ծառայությունների վերաբերյալ ստացված բողոքները և առաջարկությունները ,

3) խրախուսել տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործումը՝ սույն արձանագրությամբ սահմանված մասնակցության իրավունքի աջակցության և իրականացման համար:

3. Ընթացակարգերը, միջոցները և մեխանիզմները կարող են տարբել լինել տարբեր տեղական իշխանությունների համար՝ հաշվի առնելով նրանց չափերը և կարողությունները:

4. Պլանավորման և որոշումների կայացման գործընթացներում տեղական իշխանությանը

մասնակցելու իրավունքի կիրարկման համար պետք է նախատեսվեն համապատասխան միջոցներ. տեղական իշխանությունները պետք է ժամանակին և պատշաճ ձևով հնարավորինս խորհրդատվություն ստանան:

Հոդված 3. Իշխանությունները, որոնց վրա տարածվում է արձանագրությունը

Սույն արձանագրությունը տարածվում է Կողմի տարածքում գործող բոլոր տեսակի տեղական իշխանությունների վրա: Սակայն յուրաքանչյուր պետություն, վավերացման, ընդունման կամ հավանության արժանացնելու վերաբերյալ փաստաթղթերն ի պահ հանձնելիս, կարող է նշել տեղական կամ տարածաշրջանային իշխանությունների այն տեսակները, որոնց վրա տարածվում է սույն արձանագրության կիրառումը, կամ այն տեսակները, որոնք ինքը նախատեսում է հանել դրա կիրառման շրջանակից: Կողմը կարող է նաև, Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարին հետագա ծանուցմամբ, արձանագրության գործողությունը տարածել տեղական և տարածքային իշխանությունների այլ տեսակների վրա:

Հոդված 4. Տարածքային կիրարկում

1. Յուրաքանչյուր պետություն, ստորագրման կամ վավերացման, ընդունման կամ հավանության արժանացնելու վերաբերյալ փաստաթղթերն ի պահ հանձնելու պահին, կարող է նշել այն տարածքները, որոնց վրա պետք է տարածվի սույն արձանագրությունը:
2. Հետագայում յուրաքանչյուր կողմ, ցանկացած պահի, Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հոչակագրով, սույն արձանագրության կիրառումը կարող է տարածել հոչակագրում նշված ցանկացած այլ տարածքի վրա: Այդ տարածքին վերաբերող մասով արձանագրությունը ուժի մեջ է մտնում գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումը ստանալու ամսաթվին հաջորդող եռամսյա ժամկետը լրանալուց հետո՝ հաջորդող ամսվա առաջին օրվանից:
3. Նախորդ երկու կետերի համաձայն արված որևէ տարածքին վերաբերող ցանկացած հոչակագիր կարող է հետ վերցվել Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով: Հրաժարումը ուժի մեջ է մտնում նման ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից վեց ամիս ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հոդված 5. Ստորագրումը և ուժի մեջ մտնելը

1. Սույն արձանագրությունը բաց է Խարտիան ստորագրած Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հավանության արժանացնելու: Պետությունը չի կարող վավերացնել, ընդունել կամ հավանության արժանացնել սույն արձանագրությունը, քանի դեռ նախապես կամ զուգահեռաբար չի վավերացրել, ընդունել կամ հավանության արժանացրել Խարտիան: Վավերացման, ընդունման կամ հավանության արժանացնելու վերաբերյալ փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարին:

2. Սույն արձանագրությունը ուժի մեջ է մտնում ութ երկրների՝ պարագրաֆ 1-ի դրույթներին համապատասխան հավանության արժանանալու վերաբերյալ ընդունած հայտարարության ամսաթվին հաջորդող եռամսյա ժամկետը լրանալուց հետո՝ առաջին ամսվա առաջին օրվանից:

3. Ցանկացած պետության համար սույն արձանագրությունը, որը հետագայում հավանության է արժանացել, ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ հավանության արժանացնելու վերաբերյալ փաստաթուղթն ի պահ հանձնելու ամսաթվին հաջորդող եռամսյա ժամկետը լրանալուց հետո՝ առաջին ամսվա առաջին օրվանից:

Հոդված 6. Պայմանագրի լուծարում (դենոնսացիա)

1. Յուրաքանչյուր Կողմ, ցանկացած պահի, կարող է չեղյալ հայտարարել արձանագրությունը՝ դրա մասին ծանուցելով Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարին:

2. Արձանագրությունից հրաժարումը ուժի մեջ է մտնում գլխավոր քարտուղարի կողմից համապատասխան ծանուցում ստանալուց վեցամսյա ժամկետը լրանալուց հետո՝ հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 7. Ծանուցումներ

Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարը Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին ծանուցում է.

ա) ցանկացած ստորագրման մասին,

բ) ցանկացած վավերացման, ընդունման կամ հավանության արժանանալու վերաբերյալ փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին,

գ) հոդված 5-ին համապատասխան սույն արձանագրության ուժի մեջ մտնելու ցանկացած ամսաթվի մասին,

դ) ցանկացած ծանուցման ստացման մասին, որը ստացվել է հոդված 3-ին համապատասխան,

ե) ցանկացած այլ ակտի, ծանուցման կամ հաղորդագրության մասին, որը վերաբերում է սույն արձանագրությանը:

Ի հաստատումն այդ ամենի, պատշաճորեն լիազորված լինելով, ստորագրեցին սույն արձանագրությունը:

Կատարված է Ուորեխտում՝ 2009 թվականի նոյեմբերի 16-ին, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով՝ մեկական օրինակով: Ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են և մեկական օրինակով ի պահ են տրվում Եվրոպայի Խորհրդի արխիվ: Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի Խորհրդի անդամ յուրաքանչյուր պետություն: